ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2024 թվականի ապրիլի 10-ի, ժամը 14:00-ի նիստի
N 8 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով** («Առավոտ» օրաթերթ, 20.02.2024, N 031 / 7032) տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու **Մուշեղ Նորիկի Հակոբյանի**՝ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցողներ՝ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Ա.Վ.Գրիգորյան** և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Ա.Ա.Մկրտչյան**:

Զեկուցողները նշեցին. «Առավոտ» օրաթերթի 2024 թվականի փետրվարի 20-ի N 031 / 7032 համարում **հայտարարվել է մրցույթ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար**, որին կարող են մասնակցել ամբիոնի մասնագիտական ուղղվածությանը համապատասխան գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան, պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում ունեցող անձինք, որոնք ունեն առնվազն 5 տարվա բուհական գիտամանկավարժական աշխատանքի ստաժ: Տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով 2024 թվականի մարտի 21-ին ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարին դիմում է ներկայացրել տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու **Մուշեղ Նորիկի Հակոբյանը**: Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգով» սահմանված պահանջներին համապատասխան ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը:

Ա.Ա.Մկրտչյանը նշեց. Մ.Ն.Հակոբյանը ծնվել է 1970 թվականի փետրվարի 25-ին Արմավիրի մարզի Էջմիածնի տարածաշրջանի Ապագա գյուղում: 1977-1987 թթ. սովորել և գերազանց առաջադիմությամբ ավարտել է Ապագայի միջնակարգ դպրոցը: 1989-1994 թթ. սովորել և գերազանցության դիպլոմով ավարտել է Երևանի պետական ժողովրդական տնտեսության ինստիտուտի (այժմ՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համասարան) շուկայագիտության ֆակուլտետի լրիվ դասընթացը «Առևտրի էկոնոմիկա և կառավարում» մասնագիտությամբ՝ ստանալով տնտեսագետ կազմակերպչի որակավորում: Նույն թվականին ձևակերպվել է հայցորդ Հայաստանի պետական տնտեսագիտական համասարանի տնտեսագիտության տեսության ամբիոնում և կատարել ծրագրով նախատեսված հայցորդի իր պարտականությունները:

2001 թվականին Մ.Ն.Հակոբյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Հարկային քաղաքականության տնտեսագիտական հինադրույթները (ՀՀ օրինակով)» թեմայով Ը.00.01՝ «Տնտեսագիտության տեսություն և տնտեսագիտական մտքի պատմություն» և Ը.00.03՝ «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտություններով (գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ն.Մ.Մանասերյան) և ՀՀ ԲՈՀ-ի (ներկայում՝ ԲԿԳԿ) կողմից նրան շնորհվել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2006 թվականին ՀՀ ԲՈՀ-ի կողմից նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ: Թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելուց հետո Մ.Ն.Հակոբյանը ունի տվյալ բնագավառում հրատարակված գիտական և ուսումնամեթոդական աշխատանքներ, որոնց ընդհանուր թիվը 35 է (1 ուսումնական ձեռնարկ՝ համահեղինակությամբ, 25 գիտական հոդված՝ հրատարակված ՀՀ գիտական ամսագրերում, որից 8-ը՝ համահեղինակությամբ, 7 դասընթացի ծրագիր՝ որից 2-ը՝ համահեղինակությամբ, տպագրման ընթացքում են 1 մեթոդական ցուցումներ՝ համահեղինակությամբ և 1 դասընթացի ծրագիր): Ներկայում պատրաստվում է ամբիոնի քննարկմանը ներկայացնել «Հարկաբյուջետային հավասարակշռության և արդյունավետ հարկման տնտեսագիտական հիմնախնդիրները» վերնագրով մենագրությունը: Գիտական հետաքրքրությունների շրջանակը ներառում է տնտեսության պետական կարգավորման և պետական հատվածի արդյունավետության տեսամեթոդական հիմնահարցերը, մասնավորապես՝ հանրային ֆինանսների և ֆիսկալ քաղաքականության ասպեկտները:

Աշխատանքային գործունեությունը: Մ.Ն.Հակոբյանը 1994 թվականի սեպտեմբերի 1-ից առ այսօր աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսագիտության տեսության ամբիոնում

(01.09.1994 - 19.09.2007՝ ասիստենտ, 19.09.2007 - 12.03.2023՝ դոցենտ, իսկ 2023 թվականի մարտի 13-ից առ այսօր դոցենտ՝ համատեղությամբ): 1995 - 2005 թթ. եղել է ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) «Տնտեսագիտության տեսություն» բաժանմունքի նախագահը: 2023 թվականի մարտի 13-ից տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկանի տեղակալն է և ֆակուլտետի խորհրդի քարտուղարը: Իր գիտամանկավարժական գործունեության ընթացքում դասավանդել ու դասավանդում է հետևյալ դասընթացները. բակալավրիատում՝ «Տնտեսագիտության տեսություն», «Տնտեսագիտության հիմունքներ», «Միկրոտնտեսագիտության ներածություն», «Մակրոտնտեսագիտության ներածություն», «Հարկաբյուջետային քաղաքականության տեսական հիմնախնդիրները», «Հանրային ֆինանսներ և ֆիսկալ քաղաքականություն», «Տնտեսագիտական ուսմունքների պատմություն», «Տնտեսագիտական մտքի պատմություն», «Նորդասական տնտեսագիտություն», «Շուկայի սուբյեկտների շահերի փոխազդեցությունը», մագիստրատուրայում՝ «Ինստիտուցիոնալ տնտեսագիտություն», «Մարդկային կապիտալի տեսության արդի հիմնախնդիրները», ասպիրանտուրայում՝ «Տնտեսության պետական հատվածի ժամանակակից հիմնախնդիրները»: Մ.Ն.Հակոբյանը մասնակցել է 6 գիտաժողովի, որից 2-ը՝ միջազգային: Մասնակցել է նաև տարբեր տարիներին իրականացվող հարկային բարեփոխումների քննարկման աշխատանքներին (1998-2017 թթ.):

Զեկուցողը տեղեկացրեց նաև, որ Մ.Ն.Հակոբյանը 2005 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 1-ը «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում (ՃԿՊԱ) զբաղեցրել է ճգնաժամային կառավարման ամբիոնի վարիչի պաշտոնը, իսկ 2024 թվականի փետրվարի 9-ից առ այսօր ժամավճարային հիմունքներով աշխատում է դոցենտի պաշտոնում: Աջակցել է ՃԿՊԱ-ի ծրագրային և ինստիտուցիոնալ հավատարմագրման աշխատանքներին՝ որպես կրթական ծրագրերի բաժանմունքի ղեկավար:

Ամուսնացած է, ունի 2 որդի և մեկ դուստր:

Ա.Ա.Մկրտչյանը նշեց, որ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսագիտության տեսության ամբիոնի 2024 թվականի մարտի 28-ի, ժամը 14:00-ի նիստում (արձանագրություն N 7) քննարկվել է տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին դիմած հավակնորդ Մ.Ն.Հակոբյանի՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի» 14-րդ կետի համաձայն ներկայացրած ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագրի, հավակնորդի

մասնագիտական բնութագրի, գիտամանկավարժական գործունեության արդյունքների և ամբիոնի վարիչի պաշտոնին հավակնորդի համապատասխանության մասին հարցը: Նիստը նախագահել է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի պարտականությունները կատարող, ուսումնական բաժնի պետ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Ա.Պետրոսյանը: Նիստին հրավիրված է եղել ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Վ.Գրիգորյանը: Մ.Ն.Հակոբյանը ներկայացրել է տնտեսագիտության տեսության ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը, դրա հիմնական դրույթները և նպատակը՝ նշելով, որ այն պետք է համահունչ լինի համալսարանի զարգացման տեսլականին: Հավակնորդի վերաբերյալ դրական կարծիքներով ելույթ են ունեցել ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Վ.Գրիգորյանը, ամբիոնի պրոֆեսոր Ֆ.Ն.Մայիլյանը, ամբիոնի դոցենտներ Ռ.Ռ.Արմենակյանը, Տ.Ա.Մկրտչյանը, ավագ դասախոս Ս.Ա.Գրիգորյանը՝ նշելով, որ ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդը համապատասխանում է ամբիոնի վարիչի պաշտոնին ներկայացվող պահանջներին: Ելույթներից հետո ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդի երաշխավորության մասին հարցը դրվել է ամբիոնի նիստի բաց քվեարկությանը: Քվեարկության արդյունքների հիման վրա (միաձայն՝ կողմ՝ 17, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) որոշվել է, որ Մ.Ն.Հակոբյանը համապատասխանում է ամբիոնի վարիչի պաշտոնին ներկայացվող պահանջներին և տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար նախապատվություն են տվել Մ.Ն.Հակոբյանի թեկնածությանը:

Հարցը քննարկվել է նաև գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի 3-ի, ժամը 14:00-ի նիստում (արձանագրություն N 3): Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդի երաշխավորության մասին հարցը դրվել է մրցութային հանձնաժողովի նիստի բաց քվեարկությանը: Քվեարկության արդյունքների հիման վրա (միաձայն՝ կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) որոշվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու Մուշեղ Նորիկի Հակոբյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար: Ա.Ա.Մկրտչյանը գիտական խորհրդի անդամներին հորդորեց հաշվի առնել ամբիոնի և մրցութային հանձնաժողովի նիստերի որոշումները:

Զեկուցողներից հետո Մուշեղ Նորիկի Հակոբյանը ներկայացրեց տնտեսագիտության տեսության ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսորներ Մ.Ս.Մելքումյանը, Դ.Ն.Հախվերդյանը, Դ.Ռ.Գալոյանը, դոցենտ Ն.Հ.Խալաթյանը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գիտական խորհուրդը որոշեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու Մուշեղ Նորիկի Հակոբյանի թեկնածությունը դնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն (գիտական խորհրդի 60 անդամից նիստին ներկա էին 54-ը. կողմ՝ 54, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2017 թվականի մարտի 17-ի նիստում (արձանագրություն N 7) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի» 35-րդ կետը, տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի ընտրության նպատակով գիտական խորհրդի նիստում ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի N 1 արձանագրությունը և փակ գաղտնի քվեարկության արդյունքները (**կողմ՝ 53, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկ՝ 1**)՝ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնում համարել ընտրված տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Մուշեղ Նորիկի Հակոբյանին**:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ա. Վ. Գրիգորյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2024 թ. ապրիլի 10
Երևան